ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ավստրիայի Հանրապետության կառավարությունը, ցանկանալով կնքել եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին կոնվենցիա,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Կոնվենցիան կկիրառվի Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 2
ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ

1. Սույն Կոնվենցիան կկիրառվի Պայմանավորվող պետության կամ դրա վարչատարածքային միավորների կամ տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի կամ եկամտի, կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը՝ ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամուտների, ձեռնարկությունների կողմից վճարած աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքի հավելաճի նկատմամբ հարկերը:

3. Կոնվենցիան կկիրառվի, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Հայաստանի դեպքում՝
i) շահութահարկ
ii) եկամտահարկ
iii) գույքահարկ

iv) հողի հարկ
(այսուհետև՝ հայկական հարկ),

բ) Ավստրիայի դեպքում՝
i) եկամտահարկ
ii) կորպորացիոն հարկ
iii) հողի հարկ
iv) գյուղատնտեսական և անտառային տնտեսություններից գանձվող հարկ
v) ազատ տարածքների արժեքից գանձվող հարկ
(այսուհետև՝ ավստրիական հարկ):

4. Սույն Կոնվենցիան կկիրառվի նաև նույնական կամ ըստ էության համանման ցանկացած հարկի նկատմամբ, որը կսահմանվի սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարմար ժամկետներում կծանուցեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված որևէ էական փոփոխության մասին:

ՀՈԴՎԱԾ 3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Ավստրիա,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն,

գ) «Ավստրիա» տերմինը նշանակում է Ավստրիայի Հանրապետություն,

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավորում, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

զ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

է) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետությունում որոշումներ կայացնելու

լիազորությամբ օժտված ղեկավարություն ունեցող ձեռնարկության կողմից շահագործվող ծովային նավով կամ օդանավով, բացառությամբ այն դեպքերի, երբ ծովային նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

ը) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար և պետական եկամուտների նախարար կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ,

ii) Ավստրիայի դեպքում՝ ֆինանսների ֆեդերալ նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչ,

թ) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ միավորում, որը Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա ստացել է իր այդ կարգավիճակը:

2. Պայմանավորվող պետության կողմից Կոնվենցիան ցանկացած պահի կիրառվելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ պահին այդ Պետության օրենսդրությամբ տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան: Այդ Պետության գործող՝ համապատասխան հարկային օրենքներով սահմանված ցանկացած տերմինի նշանակությունը գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ տերմինի համար սահմանված նշանակության նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 4
ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որն այդ Պետության օրենսդրության համաձայն այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության վայրի, հիմնադրման վայրի, ղեկավարման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ Պետությունը և նրա որևէ վարչատարածքային միավոր կամ տեղական իշխանության մարմին: Այդ տերմինը, այնուամենայնիվ, չի ներառում որևէ անձի, որը ենթակա է հարկման այդ Պետությունում՝ միայն այդ Պետության աղբյուրներից ստացված եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:

2. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա ունի իր մշտական կացարանը: Եթե նա ունի իր մշտական կացարանը երկու Պետություններում, նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի իր կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի իր մշտական կացարանը, ապա նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում կամ նրանցից և ոչ մեկում չի բնակվում, ապա նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձն է հանդիսանում,

դ) եթե նա հանդիսանում է երկու Պետությունների ազգային անձ կամ և ոչ մեկինը չէ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կձգտեն հարցը լուծել փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձից տարբերվող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված ղեկավարությունը:

ՀՈԴՎԱԾ 5
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի սահմանմամբ «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

ա) ղեկավարման վայր

բ) մասնաճյուղ

գ) գրասենյակ

դ) գործարան

ե) արտադրամաս, և

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը կամ շինարարությունը կամ տեղակայման ծրագիրը կազմում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, եթե դրանց տևողությունը գերազանցում է ինն ամիսը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը՝ ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության կայուն վայրի օգտագործումը՝ ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի՝ բացառապես գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի օգտագործումը ձեռնարկության համար՝ բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության կայուն վայրի օգտագործումը բացառապես «ա» – «ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների համակցության համար, պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության կայուն վայրի համընդհանուր գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, երբ անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որին վերաբերում է 7-րդ կետը) տարբերվող անձը գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, ապա այդ ձեռնարկությունը համարվում է այդ Պետությունում մշտական հաստատություն ունեցող՝ ցանկացած գործունեության նկատմամբ, որն այդ անձն իրականացնում է այդ ձեռնարկության համար, եթե միայն այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ կետում նշվածով, որը, եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն, այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության:

6. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ապահովագրական ընկերությունը, բացառությամբ վերաապահովագրման դեպքերի, համարվում է մյուս Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող, եթե այն այդ մյուս Պետությունում անկախ գործակալի

կարգավիճակ ունեցող անձից (որին վերաբերում է 7-րդ կետը) տարբերվող անձի միջոցով ընդունում է ապահովագրական վճարներ կամ ապահովագրում է ռիսկերից:

7. Ձեռնարկությունը չի համարվում Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ այդ Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում բրոքերի, սովորական կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում: Սակայն սույն կետի իմաստով այդ անձը չի դիտարկվի որպես անկախ կարգավիճակով գործակալ, եթե այդ գործակալի գործունեությունը ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ իրականացվում է այդ ձեռնարկության անունից:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին որևէ ընկերության չի վերածում մյուսի մշտական հաստատության:

ՀՈԴՎԱԾ 6
ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացված եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ տերմինը, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման համար փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Ծովային նավերը և օդանավերը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կկիրառվեն անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կկիրառվեն նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անհատական

ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 7
ՇԱՀՈՒՅԹ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը վերը նշված ձևով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որն այն կարող էր ստանալ՝ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեություն՝ լինելով ինքնուրույն և առանձին ձեռնարկություն ու գործելով միանգամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցում համարել մշտական հաստատության նպատակների համար կրած փաստացի ծախսերը, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, ինչպես այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, այնպես էլ այլ վայրերում: Սակայն չի թույլատրվի նվազեցնել այն գումարները (եթե այդպիսիք կան), որոնք մշտական հաստատության կողմից վճարված են (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներին՝ պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիների, հոնորարների կամ այլ համանման վճարումների տեսքով, մատուցված հատուկ ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի, մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց վճարված տոկոսների տեսքով: Նմանապես, մշտական հաստատության շահույթը որոշելիս հաշվի չեն առնվի մշտական հաստատությանը վճարված գումարները (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) ձեռնարկության գլխավոր գրասենյակի կամ նրա այլ գրասենյակների կողմից՝ պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիների, հոնորարների կամ այլ համանման վճարումների տեսքով, մատուցված հատուկ ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի, ձեռնարկության ղեկավարությանը կամ նրա այլ գրասենյակներին տրամադրած փոխառության դիմաց վճարված տոկոսների տեսքով:

4. Այնքանով, որքանով Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության ամբողջ շահույթն իր տարբեր ստորաբաժանումների միջև բաշխելու հիման վրա, 2-րդ կետի ոչ մի դրույթ չի խոչընդոտի այդ Պայմանավորվող պետությանը՝ հաշվառելու ընդունված բաշխման եղանակի հիման վրա հարկման ենթակա շահույթը: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին:

5. Ոչ մի շահույթ չի վերագրվի մշտական հաստատությանը՝ այդ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքներ կամ արտադրանք գնելու պատճառով:

6. Նախորդ կետերի կիրառման դեպքում մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի կորոշվի միևնույն եղանակով, եթե հակառակն անելու համար չկա հիմնավոր և բավարար պատճառ:

7. Երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդի այդ հոդվածների դրույթների վրա:

8. Սույն հոդվածում օգտագործվող «շահույթ» տերմինն ընդգրկում է ցանկացած մասնակցի կողմից ընկերակցությունում կամ հարկման նպատակներով նույն կերպ դիտարկվող անձանց այլ միավորումում մասնակցությունից ստացված շահույթը:

ՀՈԴՎԱԾ 8
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ

1. Միջազգային փոխադրումներում ծովային նավերի կամ օդանավի շահագործումից ստացված եկամուտը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված ղեկավարությունը:

2. 1-ին կետի դրույթները կկիրառվեն նաև կոնտեյներների և դրանց պատկանող սարքավորումների անմիջական օգտագործումից, վարձակալության տրամադրումից կամ այլ ձևով օգտագործումից ստացված շահույթի նկատմամբ:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները կկիրառվեն նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործման գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 9
ԱՍՈՑԱՑՎԱԾ (ԶՈՒԳՈՐԴՎԱԾ) ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են պայմաններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կստեղծվեին երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում ենթարկվել է հարկման, և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշ փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կկատարի այդ շահույթի առնչությամբ այնտեղ գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Կոնվենցիայի այլ դրույթները, իսկ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

ՀՈԴՎԱԾ 10
ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համաձայն, բայց եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի.

ա/ շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը հանդիսանում է ընկերությունը /ընկերակցությունից տարբեր/, որը ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի առնվազն 10 տոկոսը,

բ/ շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մնացած բոլոր դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն տվյալ սահմանափակումների կիրառման եղանակը: Սույն կետը չի ազդի ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից, «օգտագործման» բաժնետոմսերից կամ «օգտագործման» իրավունքներից, հանքարդյունաբերության բաժնետոմսերից, հիմնադիրների բաժնետոմսերից կամ այլ՝ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև այլ բաժնետիրական իրավունքներից եկամուտ, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից ստացված եկամուտը՝ համաձայն այն Պետության օրենսդրության, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվի, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում՝ այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կկիրառվեն 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պետությունը չի կարող գանձել որևէ հարկ ընկերության կողմից վճարված շահաբաժինների նկատմամբ, բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ և չի կարող հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթը համապատասխան հարկատեսակով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

ՀՈԴՎԱԾ 11
ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են՝ այդ Պետության օրենքների համաձայն, բայց եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն տվյալ սահմանափակման կիրառման եղանակը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ տոկոսները ազատվում են հարկումից այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջացել են, եթե դրանք՝

ա/ մի ձեռնարկության կողմից մյուս ձեռնարկությանը որևէ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների կամ արտադրական միջոցների ապառիկ վաճառքի հետ կապված տոկոսներ են,

բ/ բանկային հաստատության կողմից տրամադրված, ներկայացնողի փաստաթղթերով չներկայացված, ցանկացած բնույթի փոխառության տոկոսներ են,

գ/ մյուս Պայմանավորվող պետությանը կամ նրա վարչատարածքային միավորներին կամ տեղական իշխանության մարմիններին վճարված տոկոսներն են:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից՝ անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները: Ըստ սույն հոդվածի՝ ժամկետանց վճարման պատճառով կիրառվող տույժերը որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում՝ այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտն է: Սակայն երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարված տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը կմնա հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համաձայն՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

ՀՈԴՎԱԾ 12
ՌՈՅԱԼԹԻ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, որը հանդիսանում է ռոյալթիի փաստացի սեփականատերը, վճարված ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այն առաջանում է՝ այդ Պետության օրենքների համաձայն, սակայն եթե ստացողը ռոյալթիի փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 5 տոկոսը: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն տվյալ սահմանափակման կիրառման եղանակը:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում կիրառելիս նշանակում է՝ ցանկացած տեսակի վճարում, որը ստացվում է որպես փոխհատուցում՝ գրական, արվեստի կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների կամ ռադիոյով կամ հեռուստացույցով հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ էլ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվի, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող

պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում՝ այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ վճարվում է ռոյալթին, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կկիրառվեն 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտն է: Սակայն, երբ ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ կայուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ կայուն բազան, ապա այդպիսի ռոյալթին կհամարվի առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

6. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը կմնա հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համաձայն՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

ՀՈԴՎԱԾ 13
ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃ

1. 6-րդ հոդվածով նախատեսված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով ունեցած կայուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի կայուն բազայի օտարումից առաջացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում ծովային նավերի կամ օդանավերի շահագործումից կամ այդպիսի ծովային նավերին կամ օդանավերին վերաբերող շար-ժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է

ձեռնարկության՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված ղեկավարությունը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից այն ընկերությունում բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների օտարումից ստացվող գույքի արժեքի հավելաճը, որի ակտիվները հիմնականում բաղկացած են մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ Պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում օտարողը:

ՀՈԴՎԱԾ 14
ԱՆԿԱԽ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մասնագիտական ծառայություններից կամ անկախ բնույթի այլ գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե նա մյուս Պայմանավորվող պետությունում իր գործունեությունն իրականացնելու համար սովորաբար իր տրամադրության տակ չունի կայուն բազա: Եթե նա ունի այդպիսի կայուն բազա, այդ եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում, սակայն միայն այն չափով, որը վերագրելի է այդ կայուն բազային:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեությունը:

ՀՈԴՎԱԾ 15
ԿԱԽՅԱԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվի առնելով 16-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե՝

ա) ստացողը ֆինանսական տարվա ընթացքում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում մյուս Պետությունում գործատուի ունեցած մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային նավի կամ օդանավի վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահագործող անձը:

ՀՈԴՎԱԾ 16
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ ընկերության այլ համանման մարմնի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 17
ԱՐՏԻՍՏՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Չնայած 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին՝ այն եկամուտը, որը Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստացել է որպես արվեստի գործիչ՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստ կամ երաժիշտ կամ որպես մարզիկ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացված իր անձնական գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Երբ արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անհատական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետի դրույթներին՝ 1-ին կետում հիշատակված գործունեության արդյունքում արվեստի գործչի կամ մարզիկի կողմից ստացված եկամուտը ազատվում է հարկից այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այդ գործունեությունն իրականացվում է, եթե այդպիսի գործունեությունն իրականացվում է Պայմանավորվող պետությունների կառավարությունների միջև համաձայնեցված մշակութային կամ սպորտային փոխանակման շրջանակներում և չի իրականացվում շահույթ ստանալու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 18
ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հաշվի առնելով 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները, կապված նախկին վարձու աշխատանքի հետ, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 19
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային միավորման կամ տեղական իշխանության մարմնի կողմից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ վարչատարածքային միավորմանը կամ տեղական իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարված՝ կենսաթոշակից տարբերվող ռոճիկը, աշխատավարձը և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի ռոճիկը, աշխատավարձը և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ մյուս Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը՝

i) հանդիսանում է այդ Պետության ազգային անձը, կամ
ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ՝ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային միավորման կամ տեղական իշխանության կողմից կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը կամ նրա վարչատարածքային միավորմանը կամ տեղական իշխանությանը մատուցած ծառայությունների համար վճարված որևէ կենսաթոշակ ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն ու ազգային անձը:

3. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կկիրառվեն նաև Հայաստանում ավստրիական արտաքին առևտրի ներկայացուցչին և վերջինիս անձնակազմի անդամներին և Ավստրիայում նմանատիպ բնույթի հայկական կազմակերպության անձնակազմին վճարված վարձատրության նկատմամբ:

4. 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կկիրառվեն Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային միավորման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց ստացված աշխատավարձի, ռոճիկի և այլ համանման վարձատրությունների ու կենսաթոշակների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 20
ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ուսանողը կամ փորձնակը, որը հանդիսանում է կամ մինչև Պայմանավորվող պետություն անմիջապես ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտը, և որը գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, այդ մյուս Պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած վճարումների համար, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

ՀՈԴՎԱԾ 21
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չհիշատակված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտը, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անհատական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և գույքը կամ իրավունքը, որի առնչությամբ վճարվել է եկամուտը, գործնականորեն կապված են այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կկիրառվեն 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամտի տարրերը կարող են հարկվել նաև այդ մյուս Պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունից օրինական պահանջի ներքո ստացված՝ 1-ին կետում նշված եկամուտը չի կարող հարկվել առաջինը հիշատակված Պետությունում, եթե նման եկամուտը, մյուս Պայմանավորվող պետության օրենքների համաձայն, պետք է ազատվի հարկից:

ՀՈԴՎԱԾ 22
ԳՈՒՅՔ

1. 6-րդ հոդվածում նշված՝ անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի կայուն բազային վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային նավերով և օդանավերով ներկայացված գույքը և այդպիսի ծովային նավերի և օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքով ներկայացված գույքը հարկվում են միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված ղեկավարությունը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 23
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Հայաստանում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ տնօրինում է գույք, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Ավստրիայում, ապա Հայաստանը թույլատրում է այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում՝ Ավստրիայում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով, և այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում՝ Ավստրիայում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով: Սակայն երկու դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրվում է եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել Ավստրիայում:

2. Ավստրիայում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

ա/ երբ Ավստրիայի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ տնօրինում է գույք, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Հայաստանում, ապա Ավստրիան, հետևելով «բ» և «գ» ենթակետերի և 3-րդ կետի դրույթներին, այդ եկամուտը կամ գույքը ազատում է հարկից,

բ/ երբ Ավստրիայի ռեզիդենտը ստանում է եկամտի տարրերը, որոնք, 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 4-րդ և 21-րդ հոդվածի 3-րդ կետերի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Հայաստանում, ապա Ավստրիան Հայաստանում վճարված հարկի գումարի չափով տվյալ ռեզիդենտի եկամտի հարկից թույլատրում է նվազեցում կատարել: Սակայն այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման

իրականացումը հաշվարկված հարկի այն մասը, որը վերագրվում է Հայաստանից ստացված եկամտի այդ տարրերին,

գ/ Ավստրիայի ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից վճարված՝ 10-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով սահմանված շահաբաժինները պետք է ազատվեն հարկից Ավստրիայում՝ համաձայն Ավստրիայի ներքին օրենսդրության համապատասխան դրույթների՝ չնայած այդ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած նվազագույն մասնակցության պահանջի մերժմանը:

3. Երբ սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը այդ Պետությունում ազատվում է հարկից, ապա այդ Պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդ ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել ազատված եկամուտը կամ գույքը:

ՀՈԴՎԱԾ 24
ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք չեն ենթարկվի մյուս Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք նույն հանգամանքների դեպքում, մասնավորապես ռեզիդենտության նկատմամբ: Այս դրույթը, չնայած 1-ին հոդվածի դրույթներին, կկիրառվի նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող՝ քաղաքացիություն չունեցող անձինք, Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել տվյալ Պետության ազգային անձինք նույն հանգամանքների դեպքում:

3. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է նվազ բարենպաստ լինի, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին հարկման նպատակներով այնպիսի անձնական զեղչեր, նվազեցումներ և պակասեցումներ տրամադրելու, որոնք Պայմանավորվող պետությունը տրամադրում է իր ռեզիդենտներին՝ նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, մի Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վարձատրությունները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես մի Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկվող կապիտալի որոշման նպատակով ենթակա կլինի նվազեցման նույն պայմաններով, ինչպես որ առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին պարտք լինելիս:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ կառավարվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ քանի ռեզիդենտների կողմից, չեն ենթարկվի առաջինը հիշատակված Պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթակվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

6. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կկիրառվեն բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 25
ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը կարծում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե դիմում-բողոքը համարվում է արդարացի, և եթե իրավասու մարմինը ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա կձգտի գործը վճռել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռքբերված համաձայնություն իրականացվում է՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությունում առկա որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած

տարաձայնություն կամ կասկած կձգտեն լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ՝ սույն Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով, այդ թվում՝ իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի միջոցով:

5. Եթե սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման շուրջ ծագած տարաձայնությունները կամ կասկածները Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները, սույն հոդվածի նախորդ դրույթների համաձայն, փոխհամաձայնեցման ընթացակարգը սկսելու օրվանից 2 տարվա ընթացքում չկարողանան լուծել փոխադարձ համաձայնությամբ, ապա գործը բոլոր հարկատուների կողմից կազմված դիմումի հիման վրա կարող է ներկայացվել միջնորդ դատարան այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից, որը սկսել է փոխհամաձայնեցման ընթացակարգը: Միջնորդ դատարանը պետք է կազմված լինի յուրաքանչյուր Պայմանավորվող պետության իրավասու մարմնի մեկական ներկայացուցչից և յուրաքանչյուր Պայմանավորվող պետության անկախ անձից, որը պետք է նշանակվի միջնորդ դատավորների ցուցակից՝ նրանց ծառայողական դիրքին համապատասխան: Միջնորդ դատավորները մեկ այլ անձի պետք է ընտրեն որպես նախագահի, որը պետք է ունենա որակավորում, որը անհրաժեշտ է իր երկրում բարձր դատական պաշտոնի նշանակվելու համար, կամ պետք է լինի իրավասու հեղինակավոր իրավախորհրդատու: Յուրաքանչյուր Պետություն միջնորդ դատավորների ցուցակի համար պետք է ներկայացնի հինգ իրավասու անձանց: Հարկատուի խնդրանքով նրա գործը պետք է լսվի միջնորդ դատարանում: Միջնորդ դատարանը իր որոշումը պետք է ուղարկի գործի ներկայացման օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս անց: Առանձին գործի համար կայացրած որոշումը պետք է պարտադիր լինի երկու Պայմանավորվող պետությունների և բոլոր հարկատուների համար, որոնց առնչվում է այն:

ՀՈԴՎԱԾ 26
ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կլինեն սույն Կոնվենցիայի կամ Կոնվենցիայում ընդգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով դրանցից առաջացած հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային: Տեղեկության փոխանակումը 1-ին հոդվածով չի սահմանափակվում: Մի Պայմանավորվող պետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն պետք է գաղտնի պահվի այնպես, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրության սահմաններում ստացված տեղեկությունը, և կարող է հայտնվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Կոնվենցիայում ընդգրկված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ, հարկերի առնչությամբ հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ կամ հարկերի վերաբերյալ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները

տեղեկություններն օգտագործում են միմիայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները դռնբաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ: Նույնիսկ նման դեպքերում անձին վերաբերող տվյալների գաղտնիությունը կարող է մերժվել այնքանով, որքանով դա անհրաժեշտ է այլ անձի գերակշռող և օրինական շահերի կամ հասարակության գերակշռող շահերի պաշտպանման համար:

2. Առաջին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես մի Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը և վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությամբ կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնելու տեղեկություն, որը կբացահայտի որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ՝ տեղեկություն, որի բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին) կամ Պետության կողմից տրված հիմնական իրավունքներին, մասնավորապես, տվյալների պաշտպանության բնագավառում:

3. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ տեղեկության ցանկացած փոխանակում, որն անհրաժեշտ է սույն Կոնվենցիայում ընդգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար, կարող է կատարվել միայն, եթե իրավասու մարմինների միջև կնքվել է վարչական համաձայնագիր, որը նույնպես կանոնակարգում է տեղեկության փոխանակման կիրառման եղանակը:

ՀՈԴՎԱԾ 27
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների անդամների՝ միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնություններին:

ՀՈԴՎԱԾ 28
ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կոնվենցիան պետք է վավերացվի Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում ընդունված ընթացակարգերին համապատասխան, և վավերագրերը պետք է փոխանակվեն հնարավորին չափ շուտ:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակմանը հաջորդող երրորդ ամսվա առաջին օրվանից, և դրա դրույթները կգործեն՝

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամտի նկատմամբ,

բ) եկամտի և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 29
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա մինչև Պայմանավորվող պետության կողմից դրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին ծանուցում ներկայացնելով ոչ ուշ, քան օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Այդ դեպքում սույն Կոնվենցիան կդադարեցնի իր գործողությունը՝

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամտի նկատմամբ,

բ) եկամտի և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկից սկսվող ցանկացած հարկային տարվա համար վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Վիեննա քաղաքում 2002 թ. փետրվարի 27-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, գերմաներեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ տարաձայնության դեպքում նախապատվություն է տրվում անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին Կոնվենցիան ստորագրելու պահին ներքոստորագրյալները համաձայնեցին, որ հետևյալ դրույթները կկազմեն սույն Կոնվենցիայի անբաժանելի մասը:

1. Կոնվենցիայի մեկնաբանումը

Համաձայնեցված է, որ Եկամուտների և գույքի վերաբերյալ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կոնվենցիայի մոդելի կամ Զարգացած և զարգացող երկրների միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի մոդելի համապատասխան դրույթների համաձայն մշակված՝ սույն Կոնվենցիայի դրույթները հիմնականում կունենան նույն իմաստը, ինչը արտահայտված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի կոնվենցիաների մեկնաբանություններում: Վերոհիշյալ համաձայնությունը չի վերաբերում որևէ հակասող մեկնաբանության, որը համաձայնեցվել է իրավասու մարմինների միջև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո:

Մեկնաբանությունները, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են վերանայվել, հանդիսանում են մեկնաբանման միջոցներ՝ Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի Կոնվենցիայի իմաստով: Մեկնաբանության ժամանակ ծագած տարաձայնության դեպքում, ինչպես նշված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի կոնվենցիաների մոդելների մեկնաբանություններում, ընդհանուր մեկնաբանման կարելի է հասնել փոխադարձ համաձայնությամբ՝ 25-րդ հոդվածի համաձայն, եթե անհրաժեշտ է:

2. Համաձայնեցված է, որ Հայաստանում «իրավասու մարմին» տերմինը նշանակում է՝

ա/ 10-րդ հոդվածի 2-րդ կետի, 11-րդ հոդվածի 2-րդ կետի, 12-րդ հոդվածի 2-րդ կետի և 26-րդ հոդվածի կիրառման համար պետական եկամուտների նախարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը, և

բ/ մնացած բոլոր դեպքերում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը:

3. Համաձայնեցված է, որ 3-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետում, 4-րդ հոդվածի 3-րդ կետում, 8-րդ հոդվածի 1-ին կետում, 13-րդ հոդվածի 3-րդ կետում և 22-րդ հոդվածի 3-րդ կետում «որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված ղեկավարության վայր» սահմանելիս պետք է, մասնավորապես, հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները՝ ընկերության փաստացի ղեկավարման և կառավարման վայրը, տնտեսական և գործառնական տեսանկյուններից ընկերության կառավարման գործում առաջատար նշանակություն ունեցող վայրը և հաշվապահական փաստաթղթերի պահպանման վայրը:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Վիեննա քաղաքում 2002 թ. փետրվարի 27-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, գերմաներեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ տարաձայնության դեպքում նախապատվություն է տրվում անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝